ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-23/2024/ՔՈԳՎ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«10» «05» 2024թ.
Ժամը՝ 14:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

ա. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՔՈԳՎ կազմակերպական վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Մխիթարյան (հանձնաժողովի նախագահ),

բ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՔՈԳՎ օպերատիվ հետախուզական տեղեկատվության և համակարգչային հանցագործությունների դեմ պայքարի վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Աբրահամյան (գնահատող անդամ),

գ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՔՈԳՎ մարդու և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժնի պետ, ոստիկանության կապիտան Ա. Մանուկյան (բացող անդամ),

դ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՔՈԳՎ թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության թմրաբիզնեսի դեմ պայքարի բաժնի ավագ օպեր-լիազոր, ոստիկանության կապիտան Դ. Պետրոսյան (բացող անդամ):

ե. Գնումներ համակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Աբասյանին (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

ՉԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ՝

ա. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՔՈԳՎ հետախուզման, անօրինական միգրացիայի և ահաբեկչության դեմ պայքարի վարչության հետախուզության և էքստրադիցիայի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Պ. Սարգիսյան (գնահատող անդամ): ՀՀ կառավարության 526–Ն որոշման կարգի 26–րդ կետի 2–րդ ենթակետի համաձայն նիստը համարվում է իրավազոր:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ՏՎՅԱԼՆԵՐ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԾՐԱՐՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ և ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝ ՀՐԱՎԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱԶՄՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.**

Հայտ ներկայացրած մասնակից ՝ **«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ –ի** կողմից ներկայացրած հայտը կազմված չէ հրավերի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ **«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ–ի կողմից բացակայում են հրավերով պահանջվող չափաբաժին 1-ի և չափաբաժին 2-ի գնային առաջարկին կից միավոր գների ծավալաթերթերը:**

2. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝**

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-23/2024/ՔՈԳՎ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մեկ /1/ աշխատանքային օրով և **«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ**–ին առաջարկել կատարել վերը նշված անհամապատասխանությունների շտկումները:

3. **ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ.**

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա կասեցված 1 աշխատանքային օրը ավարտվելուն հաջորդող աշխատանքային օրը,այն է 15.05.2024 թվականին, ժամը 16:00–ին՝ ք. Երևան Նալբանդյան 130 հասցեում:

Ընդունվեց որոշում՝ կողմ 2, դեմ 0 :

ՆԱԽԱԳԱՀ՝

ՀԱՅՏԸ ԳՆԱՀԱՏՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ա. Մխիթարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. Աբրահամյան

Ա. Աբասյան